The Armenian Center
for National and International Studies

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и
национальных исследований

Սարո Սարոյան
*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոնի փորձագետ*

ԻՐԱՔ. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՍԵԼԻՍ

3 փետրվարի 2012թ.
Երեւան

Հոդվածագրի տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

© 2012, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրապարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:

© 2012, Армянский центр стратегических и национальных исследований.
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦСНИ запрещена.

© 2012, Armenian Center for National and International Studies.
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

ԻՐԱՔ. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՍԵԼԻՍ

Հոկտեմբերի 21-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ իր վարչակարգը որոշել է Իրաքում այլեւս դադարեցնել ամերիկյան ռազմական ներկայությունը: Ըստ սահմանված ժամանակացույցի 2011թ. տարեվերջին Իրաքից դուրս բերվեց ԱՄՆ զինուժը: Օտարերկրյա զորքերի հեռացմամբ Իրաքը թեւակոխեց իր պատմության կարեւոր փուլերից մեկը, որտեղ երկրի քաղաքական ուժերի առջեւ ծանրացավ Իրաքի ապագան ինքնուրույն կառուցելու գործը: Այստեղ, սակայն, գլխավոր խնդիրն այն է, որ Իրաքի էթնոկոնֆեսիոնալ տարբեր խմբերի շահերով առաջնորդվող քաղաքական ուժերը երկրի պետական կառուցվածքի հաստատման հարցում արդեն մի քանի տարի տարամետ դիրքորոշումներ են ցուցաբերում: Մի կողմից առանձին ուժեր (հատկապես մեծամասնություն կազմող շիա արաբներին ներկայացնող կուսակցությունները) ցանկանում են երկիրը տանել դեպի կենտրոնացված պետություն կառուցելու, իսկ այլ ուժեր՝ առավել խորացված ֆեդերալացիայի ուղիով:

Այդ երկու ուղեգծերի կողմնակիցների առջեւ միաժամանակ ծառացած է երկրի վարչատարածքային առանձին միավորների սահմանների նոր վերաբաժանման ու ճշգրտման խնդիրը: Վերջինս նախորդ վարչակարգից մնացած այն ծանր բեռն է, որի հարցում դույզն իսկ սխալները կարող են երկիրը տանել քաղաքացիական պատերազմի ճանապարհով եւ հիմք դառնալ, որ շատ նահանգներում սկիզբ առնեն փոքրամասնություն կազմող խմբերի բռնաճշումներ կամ էթնոկոնֆեսիոնալ զտումներ:

Համահունչ ստալինյան ազգային քաղաքականությանը՝ Սադամ Հուսեյնի վարչախումբը նահանգների մեծ մասում նախկինում կատարել էր տարածքային այնպիսի վերածեւումներ, որոնցով շատ նահանգներում սահմանափակել էր էթնոկոնֆեսիոնալ առանձին խմբերի միանշանակ գերակայությունները: Չնայած Իրաքի նոր սահմանադրությունը հնարավորություն ընձեռում է շտկելու այդ իրավիճակը, սակայն խմբերի տնտեսական ու քաղաքական շահերի բեւեռացվածությունը քիչ հավանական է դարձնում դրա սահուն իրագործումը: Առավել լարված է վիճակը նավթային պաշարներով հայտնի Քիրքուկի շրջանում, որտեղ բախվում են արաբների, թուրքմենների եւ քրդերի տնտեսական շահերը:

Նահանգների վարչական սահմանների դեմարկացիայի խնդրից եւ տնտեսական խաչվող շահերից զատ՝ խմբերի միջեւ սուր պայքար է ընթանում նաեւ քաղաքական իրավունքների ճանաչման ու հաստատման համար: Այդ տեսանկյունից Իրաքում անցյալ տարեվերջին քաղաքական ճգնաժամը հանգեցրեց նրան, որ առավելապես սուննի արաբներով բնակեցված նահանգներում լայն տարածում գտավ ինքնավարության համար պայքարը: Հատկապես մեծ արձագանք գտավ միացյալ Իրաքի կազմում «վարչական ու տնտեսական ինքնավարության» մասին Սալահեդդինի նահանգային խորհրդի որոշումը: Սալահեդդինին հետեւելով՝ այնուհետեւ Իրաքի ֆեդերալացմանն ուղղված որոշումներով կամ հայտարարություններով հանդես եկան այլ նահանգների (Անբար, Դիալա, Բասրա, Նինեվիա) վարչական մարմիններ, քաղաքական ուժեր ու գործիչներ: Նման

զարգացումները շատ վերլուծաբանների հնարավորություն տվեցին կրկին խոսելու Իրաքի մասնատման հավանականության մասին:

Սակայն Իրաքի փլուզմանը տանող հիմնական շարժիչ ուժն, այնուամենայնիվ, ոչ թե քաղաքական իրավունքների ճանաչման համար սուննի արաբների ծավալած պայքարն է, այլ Իրաքում քրդերի հիմնած ինքնավար Քրդստանի գոյության փաստը: Վերջինս իր բոլոր ինստիտուտներով (նախագահ, խորհրդարան, զինված ուժեր, ներկայացուցչություններ բազմաթիվ երկրներում եւ այլն) կայացած մի պետություն է՝ առանց ֆորմալ ճանաչման: Հետսադամյան շրջանում ամերիկյան վարչակարգի օգնությամբ Իրաքի կառավարման գործում էական լծակների տիրանալու ու, հատկապես, մյուս կոնֆեսիոնալ խմբերի հետ վիճելի տարածքներ ունենալու հանգամանքներն այն հիմնական խոչընդոտներն են դարձել, որոնք քրդական քաղաքական ուժերին առայժմ ետ են պահում անկախական շարժում ծավալելու մտադրությունից:

Նորօրյա Իրաքում էթնոկոնֆեսիոնալ տարբեր խմբերի տարամետ շահերի առկայությունն այս երկրի ինքնուրույն զարգացման գլխավոր արգելքն է դարձել: Երկիրը վերածվել է տերությունների ու հարեւան պետությունների քաղաքական միջամտությունների կլանման հարմար հարթակի, որտեղ շահերի բախումն առավել խոցելի է դարձնում Իրաքի խաղաղ ապագան: Հատկապես հարեւան երկրներում ու դրանց շուրջ ծավալվող միջազգային քաղաքական զարգացումները մեծ անորոշություններ են ստեղծում Իրաքի հարցում: Առաջին հերթին դա կապված է Իրանի շուրջ իրադրության թեժացման հետ, որի պատճառով Պարսից ծոցում ստեղծվել է պայթունավտանգ իրավիճակ: Ասվածի համատեքստում մատնանշելի է, որ իրադրության սրացմանը համընթաց գոյության իրավունք է ստացել նաեւ հենց այն վարկածը, որ Իրանին տեսանելի ապագայում ռազմական հարված հասցնելու պատճառով է Իրաքից ԱՄՆ զինուժը դուրս բերվել (պայմանավորված այն հարվածի տակ չդնելու հանգամանքով):

Բացի դրանից, Իրաքի համար լրացուցիչ անհանգստությունների առիթ են դարձել մյուս հարեւանի՝ Սիրիայի շուրջ զարգացումները, քանի որ Իրաքի կառավարությունն իր ձեռքը վերցրած շիաների ողջ ներուժի հետագա պահպանման գրավականը Սիրիայում ներկայիս ալավիտական կլանի իշխանության գոյությունն է: Տարածաշրջանի հորիզոնական քաղաքական առանցքի (Իրան-Իրաք-Սիրիա) վրա Ասադի վարչախումբը հանդես է գալիս Իրաքում շիաների իշխանության երաշխավորի դերում: Այդ վարչախմբի տապալման դեպքում Իրաքի շիաները, իրենց աշխարհաքաղաքական դերի թուլացման պատճառով, միջազգային հարաբերություններում կկորցնեն նշանակությունն ու հետեւաբար նաեւ՝ Իրաքում քաղաքական լծակների նշանակալից մասը:

Հակառակ հորիզոնականի՝ ուղղահայաց առանցքը (Սաուդյան Արաբիա-Իրաք-Թուրքիա) ծառայում է սուննի արաբների շահերին: Հարեւանների կողմից Իրաքի ներքին գործերին միջամտելու հարցում այդ առանցքն իր հերթին Իրաքի համար վերածվել է մեկ այլ նշանակալից մարտահրավերի, որտեղ առավել ակտիվ դերակատարություն է ստանձնել հատկապես թուրքական կողմը: Դրա վկայությունն էր հունվար ամսին Թուրքիայի եւ Իրաքի վարչապետների միջեւ ծավալված հեռակա լեզվակռիվը: Ի պատասխան էրդողանի այն մեղադրանքների, որ Նուրի Ալ-Մալիքիի կառավարությունը դադարեցնի այլ խմբավորումներին (սուննի արաբներին)

պատկանող քաղաքական գործիչների հետապնդումները, Ալ-Մալիքին Թուրքիային մեղադրեց Իրաքի ներքին գործերին միջամտելու մեջ: Սրան հետեւեց էրդողանի կտրուկ արձագանքը՝ «գաղափարը, որ Թուրքիան իբր միջամտում է Իրաքի ներքին գործերին, շատ տգեղ է եւ անհաջող»:

Մեծ տերությունների, ինչպես նաեւ շիաների ու սուննիների տարածաշրջանային խաչվող շահերի տիրույթում հայտնված Իրաքում, որտեղ երկրի կառավարման հարցում ներքին էթնոկոնֆեսիոնալ անհամաձայնություններից բացի, առկա է նաեւ ինքնիշխան քրդական պետության կառուցման խնդիրը, քաղաքական ճգնաժամի հաղթահարման բոլոր ճանապարհները մշուշոտ են թվում: Որպես թույլ ու մեծ երկրից օտար զինուժի դուրսբերման բնական հետեւանք՝ լրահոսերում անընդհատ մեծանում է տարածաշրջանային ռազմաքաղաքական ուժերի կամ Իրաքի քաղաքական խմբավորումների տարաբնույթ հնարավոր դաշինքների մասին տեղեկությունների արտահոսքը (նման վերջին օրինակներից մատնանշելի է նախորդած օրերին Թուրքիայի օգնությամբ Իրաքում քուրդ-սուննիական դաշինք ստեղծելու մասին տեղեկությունների շրջանառումը):

Իրաքում սպասվող Ազգային համաձայնության խորհրդաժողովից առաջ, որի հաջողության հարցում շատերը կասկածներ ունեն, նման ծրագրերի քննարկումն արդեն իսկ փոքրացնում է այս երկրի՝ երբեւէ ինքնուրույն քաղաքականությամբ հանդես գալու հնարավորությունը (հատկապես, որ ԱՄՆ «աջակցությամբ» կազմված Իրաքի սահմանադրությունը երկրի կառավարման հարցում ուղղաձիգ կենտրոնացված կառավարման հնարավորություն ուղղակի չի թողնում): Ըստ էության, Իրաքի միասնական ու խաղաղ ապագան առայժմ սարերի ետեւում է, իսկ Իրանի ու Սիրիայի շուրջ իրադրության թեժացումը՝ ընդամենը շաբաթների ու ամիսների խնդիր: Ուստիեւ Իրաքում ազգային համաձայնության շուրջ սպասելիքները դառնում են իրականությանը ոչ համահունչ տեսական ակնկալիքներ:

Սարո Սարոյան
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոնի փորձագետ

3 փետրվարի 2012թ.
Երեւան